

## Գ Բ Ա Կ Ա Ն

## ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

## ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐՈՒ ՎՐԱՅ

(ԺՁ. ԺԵ. ԺԸ և ԺԹ Գ-Կ. Պ-Ա-)

(Շար. տես Բազմ. 1929, էջ 43)

Ձ.

(ԺԹ դար 1800-1865)

Տապան Յոնանիսի Ապտուլանհան որդւոյ Հիւրմիզի:

22. Պարծանք պանծալի տանն Ապտուլանհանց. Տան ծաղկեցոցիչ հօր իւր զերզանց. Քաղաքավարօղ ըստ բարեգնաց. Զիւր տուն զիւր որդիս հայր բարեգնաց: Սէր իւր երկնայնոց հանդերձեալ փառաց. Հուստոց կենդանի և յ(ո)յս առ Ատուած. Ելանել աստի ընտրելի զստեաց. Հովտէս տրտմութեանց յերկիրն աւետեաց, Կսկիծ իւր եղբօր տարածմա՛ կենաց. Յետ ութից ամսոց իւր զործոց բարեաց. Քան զժառանգութիւն ընչից արգասեաց, Յանձնեալ զորդիս իւր ոչ ի փոյթ մարդկանց. Քան թէ ի խնամս վերին տեսութեանց: Զաստեաց անարգեալ զհաղբ զերկրաւորաց. Զանանց բերելով զանձ երկնաւորաց:

1808 ՌԻՄԵՆԻ ի Մայիսի 1

ի հասակի խն ամաց

Պետրոս և Պողոս Ողուլուխեան Տրապիզոնցի:

23. Երևուից տո՛մական, տունն առաքինի. Այս տո՛մ սրբազան, մեռեալ կենդանի. Պօղոս առաջին աշխի գո՛վանի, Տեառն Յակոբայ երեցու որդի: Քառասուն երեք ամաց վախճանի. Հազար եօթն հարիւր վաթսուս ինն ամի. Պօղոս Աղստի անուն զաւակին, Հինգ ամսով ծնեալ յետ փոխման նորին: Գտաւ պատուական մարգարիտ անգին. Յօրունց զերզանց յամենայն մասին: Ընտիր ոսկերիչ, ակնագործ նարտար. Հանուր արհեստից աշուղ աշ(ր) արդար: Այլ սքանչելի բարձ համբիրատար. Բազմամեայ ցաւօք անշուշտ Յովբ արգար: Թողեալ իւրայնոց մորմոք մեծացաւ. Երեսուն և ութ ամաց փոխեցաւ:

Հազար ութ հարիւր ութ ամ սկսաւ  
Քսան և երեք յունվարի լցաւ:Տապան Անթառամ տիկնոջ Սօֆիայեան՝  
կողակցի Զաւատունիկ Պետրոսի Արքեան:

24. Սիրեցեալ տիկին յուրոց և յայլոց. արժան կարծեցեալն ամաց հարիւրոց. զհարձ զկաթուածոց ընկալեալ ըզխոց. զտխրականն արկաւ զմահուն զօթոց: Սակաւուց դիպեալ այս օրիտ բարեբար. սակաւուց տունալ իւր միւսք կառավար: Զհարձ սեազգեաց զհարազատսն արար. յանկարծ բառնալով թիւնից մահարար. քաջաղէպ ողուին իւր լեզուին բարբառ. տանց զործանուութեանց յարմար և նարտար: Այս ձեռք անմոռացք թանան անշաղար. զարտասուս սըզոյ զիւրսն և զօտար:

ի հասակի կգ ամաց

ի թուականիս ՌԻՄԵՆԻ 1810 հոկտեմբերի 16

Տապան Բարեառնի Չլիփոնձի Սա՛մուէլի:

25. Ի կազմուած մարմնոյն իւր կերպարանաց. Քաջառողջ ցուցեալ նման կորովեաց. Ի փոյթ հոգեօր բարետոնմութեանց. Զեռանդի բերեալ զարթթասիրաց: Զկողմամբ լըջեալ պէս պէս աշխարհաց. ՅԱստուած պաշտութեան ծառայ անմոռաց: Ի զործ զանազան տուր և առութեանց: Ողջամիտ արդար՝ կշռող իրաւանց: Հարտար յարուեստի արծաթագործաց. Խնամով կարգեալ ի զործ արքունեաց: Ի ձախորդութիւնս յանիւ իւր կենաց. Զանձն ուղերձեալ արարչին կամաց: Հաւասար կենդանի՝ յոյս իւր առ Աստուած. Սիրով ետ տանիլ երկար իւր վտաց: Զծանրութիւն տարեալ իւրոց լսեցեաց. Սպասէր ի լուր Արարչին հրամանաց: Տասնամեայ զրկեալ ի լուսոյ աշաց. Դէտ ակն կալել միշտ լուսոյ փառոց: Երկոտասան թիւ իւրոց զաւակաց. Թող զիւր զօրինակ զինչս ժառանգաց. Զանցեալ զիննսուն զամօք ծերունեաց: Փոխէ զանցաւորս ըստ անանց բարեաց: Ի թուականիս ՌԻՄԵՆԻ 1811 Դիմիտ. 30

Դամբարան քէհրիպարի վաճառական  
Մինաս աղայի կողակցի Հանրմայի:

26. Այս ծաղկահաս դուստր մեծի.  
Ստեփաննոս ամիրայի:

Գու Տաքսեանն ազնիւ զարմի,  
Եւ մահտեօի բարեպաշտի:  
Լեալ կողակից աղայ Մինասի.  
Օհան ճանեան բարետոհմի:  
Կոչեալ անունն Սրբուհի.  
Որ մականունն Հանքմ կոչի:  
Իբր երեսուն թիւ հասակի.  
Հանգիպելով զազիր ախտի:  
Բերեալ բժշկիք ի ջան բուժի  
Չեղև հնար անբոյժ ախտի.  
Եկն հնաս վերնոյն վճռի.  
Փոխեալ աստի անանց կենի:  
Արդ հանգիպողք այսմ չիրմի.  
Հոգւոյն սորին տուք զորդորի  
Թվին Փրկչի 1813 հոկտեմբերի 18

Տապան Իսկուհւոյ դստեր Զա(մ)չեան  
Արարհամուռ և Խնճիճեան Սրբուհւոյ:

27. Արիւսցեալ մօրն սիրեցեալ զաւակ.  
Տանց առնելութեանց ալ համալսասեակ:  
Ի հասնիլ անդ յիւր ծաղկեալ հասակ:  
Ի յայտ տապալեաց օրհասին մահակ:  
Ջղարմանաց խնամք զղեղոցն օժանդակ.  
Ի թոյն փոխարկեալ բժշկաց Վրիպակ:  
Ի խնամելն անդ ախտիցն անտեղեակ.  
Ջիւր ցանկալի կեանս կարճեցին արագ:  
Եղբարց ընտանեաց թիկունք և դաստակ.  
Ի գերեւ ելեալ անօգուտ մահակ:  
Առգ և աղէտք մօրն գութ իւր անապակ.  
Յաւազին բերեալ զթաղերգուաց զառակ:  
Պատկեր վայելուչ անձնաւէտ դիտակ.  
Դէմք գեղածիծաղ սիրտ զուարթատեսակ:  
Ձեռք յաջող ի գործ՝ փոյթ իւր ի վաստակ.  
Աս իւր կերպարանք, արձան յիշատակ:  
Ի հասակի ժը ամաց  
Ի թուականիս ՌՄԿԲ 1813

Աստ հանգչի Քիւրքճիխանից Թոհաննէս  
Ամիրայի որդի Թոհաննէս Աղայն:

28. Օրինակ բարեաց՝ գործովք իւր անձին.  
Սիրելի բազմաց՝ խորհրդով սրտին:  
Աղանաբարոյ յիրքն առտընին  
Յօդ խաղաղութեան սիրոյ ընկերին:  
Ախարհ անողորմ, աշխարհ ցաւագին  
Պոռնեպ սայրասուր, քա վէրք մահածին.  
Յերեսուն ամի առոյգ հասակին.  
Հարեւր ծանտախտի էարկեր ի գետին:  
Ըզթեզ աղաչէ, բժիշկ երկայային.  
Մատո՞ ըզկենաց քո զըսպեղանին.  
Բերկրեցո՞ ըզսա ի յարկըն վերին.

Լիւր մխիթարիչ որդւոյն և տոհմին  
յամի Տեառն 1815 հոկտեմբերի Դ:

29. Պարգեւ բողբոջեալ Տիկին մեծազգի.  
Անուն Վարդենի անթառամուհի:  
Թառամեալ կենօք՝ յայտ դիւ տապանի.  
Յուսով սպասեալ անմահ պըսակի:  
Ո՛չ ի գեղ տեսեան այլ վարուք բարի.  
Կին ժըրագուիւ՝ պսակ ցանկալի:  
Ամուսին եղեալ զօրէն աշխարհի.  
Խնթսէրճի Յակոբ՝ նուաստ ծառայի.  
Ջատեալ յիւրայնոց՝ միշտ անդառնալի.  
Յաւազար կենօք՝ ինքեան որբալի:  
Արդ տէր իմ Յիսուս հոգեոց բաղձալի  
Ընկալ զայս տիկին՝ ի յարկ խորանի:  
Ի թուին հայոց ՌՄԿԷ սեպտեմբերի ԺԴ:

Արձանական Տիկնոջ Թագուհւոյ Մա.  
կանուն Սարաֆեան:

30. Ո՛վ դու եղծական՝ ո՛չ չէնք տխրական.  
առ քեզ դիմ ըզբան գիր ի զանձարան.  
ոչ և քեզ նըման՝ կայի ողջ կենդան,  
որ այժմ կոխան զընիմ յայտ տապան:  
Ո՛ր իմ պատուական՝ կեանքն իմ բերկրաւ  
[կան  
փաղփիւն գերթական պարծանք տոհմական.  
արդ իցէ՝ տան ձայնիս պատասխան  
կամ որդոյ փոխան՝ որդւոցս օճան:  
Ո՛չ զինչ աղէկէ՛զ՝ այս իմ տեսարան,  
գի են տարաբնակ՝ ուստեղքս սիրական:  
Միակ տէր դուստրս իմ՝ հեղու ըզկական.  
կարօտ մօր սիրոյ ի սէր զուգական:  
յամի Տեառն 1817 յուլիս 18:

31. Ընտիր շառաւիղ յարմատոց բարեաց.  
Ազնիւ տոհմական՝ սերունդ աղուլեաց  
Յովհաննէս աղա սիրելի բազմաց.  
Բնեզաւաճառ ի ցեղէն Նուստեանց  
Քառասուն և հինգ ամի իւր կենաց  
Օրհասին կանխեալ, յաշխարհէ փոխեաց  
Ջնոցի սուրա բարեգութ Մատուած  
արա արժանի՝ երկնային փառաց:  
Տեառն յամի 1817 յուլիս 11:

Սուրբապ աղայի ամուսին մահտեաի Եւայ  
խաթունին:

32. Վճիռ անդարձ՝ տեսուն բանին.  
Եհաս յականջս անդառնօր.  
Պուռն մահաբեր փականց զայս իմ,  
Արկ մերկանդամ յայտ գուր խոր:

Անդէն որդովք իմ չորեքին,  
 Բնծայր սիրտ իմ փառաւոր:  
 Աստէն Յնամ, մայր ցաւագին,  
 Հարեալ ի նետ սգաւոր:  
 Քեզ պաղատիմ, մի Միածին,  
 Աղաչանացս դու իմ լուր.  
 Ի լուսեղէն կամար վերին  
 Առ զիս, տար զիս, Երկնաւոր:  
 յամի Տեառն 1817:

### Տապանազիր Աղասի չէլէպիին

33. Խորհիս ով դու քաջ մրտաք բանական  
 եթէ յո՞ ձրգիս՝ եւ առ ինչ վախճան,  
 Զի ափիբերան՝ կաս ի զարմացման  
 ընդ այս հոյակապ՝ քերթը դամբարան:  
 Քեզ հանուր փառացս՝ քարոզ պատուաբան.  
 Մընայ մի միայն՝ վէճ՝ լռեալս արձան:  
 Ես իսկ եմ Պօղոս՝ պարծանք Աբիկեան.  
 Ետկայն ազգասէր է իմ զարդ անուան:  
 Փող գեղեցիկա՞ն ի յազգիս արամեան.  
 Կեօղդ գիւցազնոյն՝ խորհրդոց թարգման:  
 Գերանդի՞ ձեռին՝ յազարակ հայկեան.  
 Հընձող որդեանց՝ նախանձարկութիւն ցան:  
 Վէս թշնամութեան՝ հըրգը արտայան.  
 մինչ շունչս յիս քաղէր՝ կայի ցանկ  
 [պաշտպան:  
 Զնոյն օրինակ՝ գեր սիրոյ սահման.  
 ցուցի անթերի՝ յընտանի խնամ:  
 Զորդիս սընուցի՝ ի գոգ հայրական.  
 բայց առազատն էր ինձ հեռի միայն:  
 Եղբարք իմ ե քորք՝ կանաւ բազմութեան.  
 յաւէժ յիշատակ՝ սերընդոց փոխան:  
 Լըթի բովանդակ՝ զաշխարհս ամենայն.  
 յայտ վայր ամփոփիմ՝ բուռն հարկիւ  
 [մահուան:  
 Երչս ունիմ անմահ՝ ի խոր թագնութեան.  
 նորիլ ի մուխոյ փունիկ հրաշագան:  
 Խնդագին լսել՝ զմայն տէրունեան.  
 Թոշիլ վերանալ՝ յԱստուած յաւիտեան:  
 Երնա յամի 1777 մեռաւ ի թվին  
 1897 մարտի 9:

34. Ընդ այս մահաբաժնի հանգչի անմոռաց.  
 Օգոստինոս՝ տունկ ընտիր անակապ:  
 Բողբոջ՝ Հանքման զարդ իւր ընտանեաց.  
 Կեօղդ նահատակ տո՛մին պարծանաց:  
 Յաւէտ ցանկացաւ անգրաւ փառաց.  
 կամակիր վշտաց արգել գիւնաց:  
 Անահ գիմագրաւ աղնութեանց մեծաց.  
 քրտնաշման երկօք զանուն ժառանգեաց:

Թէպէտ այս շիրիմ, քարոզ կենդանեաց.  
 զայրն մեծաշուք ի հոգ զրաւաց.  
 այլ կայ կենդանի յորդին բարեկեաց,  
 Թողեալ զիւր կընի յիշատակ բարեաց:  
 Բարեւի վարուք՝ մեկնեցաւ յաստեաց.  
 յեծթանասն ե մի հասակի կենաց.  
 քսանեթին յունիս՝ թիւ փրկչին ամաց,  
 հազար ութ հարիւր զոյգ էր ընդ տասանց:  
 Յիշատակն արգարաց օրհնութեամբ եղիցի:  
 (Շարունակելի) Գ. ՀԱՅՏԵՐ

## Ի Դ Ա Մ Ե Ն Գ Ե Ս

### ԱՇԽԱՅԻՆ ՄՏԱՆՈՒՄԵՐ

Ո՛հ, չէ՛ երկինքը տօգոյն  
 Ար ա՛յ ունի՛ մայրամուտներ միգապատ  
 Աւալալուշներ մեղամաղձիկ ու դանդաղ.  
 Եւ ոչ քամին՝ մոլեգնաշունչ՝ սառուցիկ  
 Ար կ'իջնէ վար լեռներէն.  
 Ա՛յ տերեւները դեղին  
 Ար ոստերէն՝ իբրեւ նըսեմ թիթեռներ՝  
 Թռչըտըտով չոր գիտնիլ վրայ կը հանգչին.  
 Ա՛յ խոնջ երգերն հերկողին,  
 Արոնց երբեմն կ'ընկերէ զանգակի  
 Զայն մը տըխուր՝ սրտառուչ,  
 Ար կ'արթնցնէ սոյն այս մեռելիլը զանդաղ...

... Ո՛հ, սիրտըս չի՛ տըրեցներ  
 Անքան ասի՛ Արուն հահ սկըսելուն...

Կը մրտածեմ անարին  
 Երկաթասարդ այն կեանքերն  
 Արեգակի ծարաւի,  
 Զերդ տերեւներն որ ճիւղէն  
 Կը չուզէ հովք՝ տակաւին թարմ ու գիրգ.  
 Երկաթասարդ այն կեանքերն,  
 Արոնք ամէն իրկուն՝ արփին մտնելուն՝  
 Նըման ճերմակ՝ հոկտեմբերեմն վարդերուն՝  
 Կը թերթատեն կեանքի բաժակը վերջին  
 Եւ կը պահեն լոյսի շողիւն մ'յուսահատ  
 Հուսկ յետին ողբ ու կոծի  
 Իրենց քողութեմ եւ անշարժուն բիբին մէջ...  
 ... Կը տըրեցնէ այս հահ  
 Իմ սիրտս անհուն թախիծով:

Երգիկներուն համար կայ յոյս անվախճան,  
 Կըմախացած ու մերկ ամէն մի ոստի,  
 Տըմոյն տօգոյն երկինքի,